Ս.Շտիկյան

ՍԱՐԻԲԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60 ՏԱՐԻՆ

...Կյանքի ճանապարհը լավ սկսվեց Սարիբեկի համար։ Առաջադիմության բարձր նիշերով 1939թ. ավարտեց տասնամյակը և ընդունվեց Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, երազած մասնագիտության մեջ խորանալու համար։ Այստեղ էլ, լավագույնների թվում մշտապես հիշատակվում էր նրա անունը։ ՈՒսանող Սարիբեկ Մանուկյանի հետ արդեն հույսեր ու հեռանկարներ էին կապում, սակայն աշխարհ եկավ 1941 չարագույժ թվականը։ Խաթարվեց լավ սկսված կյանքի ուղին և միլիոնավորների պես երրորդ կուրսի ուսանող Սարիբեկ Մանուկյանն էլ ստիպված եղավ զենք վերցնել և շուրջ հինգ տարի քայլել պատերազմի արյունոտ քառուղիներով։ Ռազմիկ հայորդին կռվով հասավ մինչև Բեռլին և երախտապարտ հայրենիքը նրա կուրծքը զարդարեց «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» և «Կարմիր աստղ» շքանշաններով։

Զորացրվելուց հետո Սարիբեկ Մանուկյանը դարձյալ ձեռքն առավ դասագրքերը՝ ուսման թերին լրացնելու համար։ Համառ աշխատանքը տվեց իր բարեբեր արդյունքը. 1946թ. ավարտելով Համալսարանը՝ նա ընդունվեց ասպիրանտուրա, իսկ 1951թ. «Գեղամ Սարյանի ստեղծագործությունը» թեմայի պաշտպանության համար գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը նրան միաձայն շնորհեց բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Սարիբեկ Մանուկյանի գիտական ուղին սկսվել էր...

Գիտնականի մեծ ու փոքր աշխատություններն իրենց երկար սպասեցնել չտվեցին։ «Գեղամ Սարյան» (Երևան, 1954), «Ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ» (Երևան, 1956), «Վահան Թոթովենց» (Երևան, 1959), «Լևոն Բաշալյան» (Երևան, 1963) և այլ մենագրությունները, շուրջ 200 անուն թերթային և ամսագրային հոդվածները եկան մի անգամ ևս ապացուցելու, որ հանձինս Սարիբեկ Մանուկյանի սովետահայ գրականագիտությունն ունի իր անխոնջ աշխատավորին, գրչի համեստ ու հաստատուն մշակին, ջանադիր ու մանրակրկիտ պրպտողին։ 1957թ. հրատարակված «Սովետահայ գրականության տարեգրությունը» (Հ.Ղազարյանի և Ա. Զաքարյանի աշխատակցությամբ) ծավալուն աշխատությունը, 1964թ. լույս տեսած «Հակոբ Հակոբյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը» (Խ. Գյուլնազարյանի հետ համատեղ) ուսումնասիրությունը վերևում ասվածի լավագույն ապացույցներն են։ Աշխատանքային-գիտական-բանասիրական գործունեության յուրատեսակ «գագաթնակետ» հանդիսացավ Հակոբ Հակոբյանի երկերի ժողովածվի ակադեմիական քառահատոր հրատարակությունը, որն իրականացվեց 1955-58թթ. Խ.Գյուլնազարյանի հետ համատեղ։ Մեր դասականի յուրաքանչյուր հատորն ունի տեքստաբանական-մասնագիտական հմուտ ծանոթագրություններ, որոնց գիտական հավաստիականությունը ոչ մի կասկած ու տարակույս չի վերցնում։

1972թ. բերկրալից հաջողության տարի եղավ Սարիբեկ Մանուկյանի համար։ Գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը, նկատի ունենալով նրա «Հակոբ Հակոբյան» մենագրությունը, միաձայն շնորհում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան։ Տարիների լավ աշխատանքը արժանացավ իր գեղեցիկ վարձատրությանը։

Արվածը շատ է, անելիքը՝ ավելի շատ, և բանասիրական գիտությունների դոկտոր Սարբեկ Մանուկյանը երիտասարդական խանդավառությամբ շարունակում էր իր գործունեությունը։ Ինստիտուտում հրատարակվող «Հայ նոր գրականության պատմության» հինգերորդ հատորի համար պետք է գրել երկու գլուխ, որոնք արդեն ավարտում է, «Հայ քննադատական մտքի

պատմության» առաջին հատորում էլ գրելու է մեկ գլուխ, արդեն վերջացնում է Հայ պրոլետարական գրականությանը նվիրված ուսումնասիրությունը, շարունակում է նյութաժողովքը «Երվանդ Օտյան» մենագրության համար...

Այո, շատ բան է արվել և շատ բան էլ դեռ կա անելիք։ ՈՒստի վաթսունամյա մեր հոբելյարին մնում է ցանկանալ քաջառողջություն, որպեսզի նա կարողանա ի կատար ածել բոլոր-բոլոր մտահղացումները։

«Գրական թերթ», № 11